ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78-1>>

ք. Երևան « 28 » հունիսի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ազդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **9020000** (ինը միլիոն քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ. ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Երևանի քաղաքապետարան	«Ազդ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Չարենցի 7/35
ՀԿՀՀ 02593108	ՎՏԲ Հայաստան բանկ
Կենտրոնական գանձապետարան	Հ/Հ 16072020833100
Հ/Հ 900012410537	ՀԿՀՀ 01528093
Գ. Զթրյան ----------	Հ. Հարությունյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 28 » հունիսի 2018 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախ. չափ./հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79951110/263	«Երևանյան ամառ 2018 հունիս» մշակութային միջոցառումների շրջանակում. Կարապի լճում կազմակերպել արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի բացօթյա ցուցադրություն /ֆիլմերի ցանկը անհրաժեշտ է միջոցառման մեկնարկից առնվազն երեք օր առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ/, միջոցառումը անհրաժեշտ է մեկնարկել Հայ Առաքելական եկեղեցու հոգևորի բացման խոսքով, որից հետո ազգային երգերի և պարերի, երաժշտության կատարումներով: Ազգային երգ ու պարի կատարումների տևողությունը պետք է կազմի առնվազն 30 րոպե: Ընտրված կատարողները, համույթը, ինչպես նաև կատարումները անհրաժեշտ է նախապես՝ միջոցառման մեկնարից առնվազն երկու օր առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ֆիլմերի ցուցադրության համար ապահովել դեպի Սայաթ-Նովա փողոց նայող էկրան առնվազն 3 X 5 մետր չափսերով, ըստ անհրաժեշտության մոնտաժել նաև էկրանի չափսերին համապատասխան ֆերմաներ, անհարժեշտ է ապահովել տեղայնքին համապատասխան ձայնային սարքավորումներ /ընդհանուր 15-25 կվտ հզորությամբ/, ինչպես նաև բարձրախոսներ նախատեսված երգիչների և երաժիշտների համար, ապահովել այլ տեխնիկական բոլոր պահանջները նախապես համաձայնեցրած լինելով բոլոր մասնակիցների տեխնիկական	դրամ	3740000	1	Ք. Երևան	մինչև հուլիսի 1-ը

		պահանջների հետ: Մոնտաժված էկրանի ներքևի հատվածում /ջրի մեջ/ ապահովել համույթի ելույթների համար անհրաժեշտ չափերով բեմահարթակ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը: Էկրանը, ֆերմաները, բեմահարտակը և վերը շարադրված այլ տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 12 ժամ առաջ: Միջոցառման անցկացման ամսաթիվը և մեկնարկի ժամը համաձայնեցնել պատվիրատուի հետ պայմանագիրը կնքելուց հետո մեկ օրվա ընթացքում: «Շարլ Ազնավուրի անվան հրապարակում» անհրաժեշտ է կազմակերպել համերգային ծրագիր 2 ժամ 30 րոպե տևողությամբ, հեղինակ կատարողների մասնակցությամբ /մասնակիցների ցանկը և կատարումները անհրաժեշտ է միջոցառման մեկնարկից առնվազն երկու օր առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Ծրագրի իրականացման նապատակով նշված տարածքին համապատասխան ապահովել անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը 6 մետր X 6 մետր X 0.8 մետր չափսերով/, կենդանի կատարումների և ընտրված հարթակում /տեղանքի/ համապատասխան հնչեղությունն ապահովելու համար առնվազն 25 կվտ հզորության ձայնային սարքավորումներ իրենց համապատասխան միկրոֆոններով, որոնք պետք է բավարարեն մասնակիցների անխափան ելույթներն իրականացնելուն: Ապահովել լուսային սարքավորումներ ընդհանուր գունային դինամիկ լուսավորություն, ընդգծված լույսերի ուղեկցությամբ ինչպես նաև լուսավորություն նկարահանման համար և կենդանի նվագակցության համար այլ անհրաժեշտ սարքավորումներն ըստ մասնակիցների կողմից առաջադրված տեխնիկական					

		պայմանների: Լուսային սարքավորումների շահագործման նպատակով ըստ անհրաժեշտության ապահովել բեմահարթակի չափերին համապատասխան ֆեմաներ: Սարքավորումների սպասարկման և շահագործման նպատակով ապահովել էլեկտրաէներգիայի սնուցում բեմահարթակից 2 մետր հեռավորությամբ: Բեմահարտակը և վերը շարադրված տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 8 ժամ առաջ: Միջոցառման անցկացման ամսաթիվը և մեկնարկի ժամը համաձայնեցնել պատվիրատուի հետ պայմանագիրը կնքելուց հետո մեկ օրվա ընթացքում: Հյուսիսային պողոտայում անհրաժեշտ է կազմակերպել մանկական համերգային ծրագիր 2 ժամ տևողությամբ՝ մանկական համույթների, անհատ կատարողների /միջոցառման մեկնարկի օրվանից առնվազն երկու օր առաջ՝ մասնակիցների ցանկը և կատարումները համաձայնեցնել պատվիրատուի հետ/, վերջինիս իրականացման համար ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /նվազագույնը՝ 6 մետր լայնություն, 6 մետր խորություն և 0.5 մետր բարձրություն չափսերով/, տեղանքին համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային սարքավորումներ 20-30 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով երգիչների և երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ: Բեմահարտակը և վերը շարադրված տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 8 ժամ առաջ: Միջոցառման անցկացման ամսաթիվը և մեկնարկի ժամը					

		համաձայնեցնել պատվիրատուի հետ պայմանագիրը կնքելուց հետո մեկ օրվա ընթացքում:					
2	79951110/264	«Երևանյան ամառ 2018 հուլիս» մշակութային միջոցառումների շրջանակում. Մինչև ս/թ հուլիսի 9-ը, ժամը 20:30-ից Կարապի լճում կազմակերպել «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի ընտրված ֆիլմերի բացօթյա ցուցադրություն /ֆիլմերի ցանկը անհրաժեշտ է միջոցառման մեկնարկից առնվազն մեկ օր առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Ֆիլմերի ցուցադրության համար ապահովել դեպի Սայաթ-Նովա փողոց նայող էկրան առնվազն 3 X 5 մետր չափսերով, ըստ անհրաժեշտության մոնտաժել նաև էկրանի չափսերին համապատասխան ֆերմաներ, անհարժեշտ է ապահովել տեղայնքին համապատասխան ձայնային սարքավորումներ /ընդհանուր 15-25 կվտ հզորությամբ/: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը: Էկրանը, ֆերմաները, բեմահարտակը և վերը շարադրված այլ տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 10 ժամ առաջ: Մինչև ս/թ հուլիսի 9-ը, ժամը 12:00-ից Կարապի լճում կազմակերպել «Վարդավառի տոնին» նվիրված միջոցառում դի ջեյի կամ դի ջեյների, հանդիսավարի կամ հանդիսավարների մասնակցությամբ առնվազն 1 ժամ 30 րոպե տևողությամբ համերգային ծրագիր: Հանդիսավարելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան սցենարական պլան և մշակել վարելու խոսքի տեքստ: Միջոցառման մեկնարկի օրվանից առնվազն երկու օր առաջ անհրաժեշտ է մասնակիցների ցանկը, սցենարական պլանը և հանդիսավարի համար մշակված խոսքի տեքստը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջինիս իրականացման համար «Ռիչ» սրճարանի դիմացի հատվածում, դեպի Կարապի լիճ նայող մասում	դրամ	1890000	1	Ք. Երևան	մինչև օգոստոսի 1-ը

		ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ /4 մետր լայնություն, 4 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/: Դեպի Կարապի լիճ նայող տեղանքին համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային սարքավորումներ առնվազն 20 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բառձրախոսներ ապահովելով դի ջեյների և հանդիսավարի տեխնիկական պահանջները Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցում՝ բեմահարթակից մեկ մետր ոչ ավել հեռավորությամբ: Բեմահարտակը և վերը շարադրված այլ տեխնիկական միջոցները անհրաժեշտ է, ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 6 ժամ առաջ:					
3	79951110/265	«Երևանյան ամառ 2018 օգոստոս» մշակութային միջոցառումների շրջանակում. Մինչև ս/թ օգոստոսի 13-ը, ժամը 19:00-ից Ազատության հրապարակում կազմակերպել դի ջեյների /DJ/, բենդի կամ բենդերի մասնակցությամբ 4 ժամ տևողությամբ համերգային ծրագիր: Համերգային ծրագիրն իրականացնելու համար ապահովել հանդիսավար կամ հանդիսավարներ: Հանդիսավարելու համար անհրաժեշտ է, ապահովել համապատասխան սցենարական պլան և մշակել վարելու խոսքի տեքստ: Միջոցառման մեկնարկի օրվանից առնվազն երկու օր առաջ՝ անհրաժեշտ է մասնակիցների ցանկը, սցենարական պլանը և հանդիսավարի համար մշակված խոսքի տեքստը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջինիս՝ իրականացման համար ապահովել և սպասարկել՝ անհրաժեշտ բեմահարթակ՝ 8 մետր լայնություն, 6 մետր խորություն և 1 մետր բարձրություն չափերով/, ֆերմաներ՝ 10 մետր լայնություն, 8 մետր խորություն և 6 մետր բարձրություն չափերով, բեմի ծածկ ֆերմաների չափերին համապատասխան, Ազատության	դրամ	3390000	1	ք. Երևան	մինչև սեպտեմբերի 1-ը

		հրապարակում համապատասխան հնչեղությունն ապահովելու համար ձայնային առնվազն 40 կվտ հզորությամբ ներառելով բեմի համար նախատեսված բարձրախոսներ ապահովելով երաժիշտների բոլոր տեխնիկական պահանջները նախապես հաստատված կարգով, նվազագույնը 40 միավոր՝ լուսային սարքավորումներ որոնցում ներառված կլինեն դինամիկ գունային, հատուկ ընգծված լուսային էֆեկտներ ԼԷԴ էկրաններ ըստ նախապես համաձայնեցված պլանով և կառուցվացքով և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան հզորության էլեկտրաէներգիայի սնուցումը 3 ֆազի համակարգով առնվազն 40 կվտ հզորությամբ: Բեմահարտակը և վերը շարադրված տեխնիկական միջոցները անհրաժեշտ է ապահովել միջոցառման մեկնարկից առնվազն 10 ժամ առաջ:				

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410537

Գ. Չթրյան ________
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Ազդ» ՍՊԸ
Ք. Երևան, Չարենցի 7/35
ՎՏԲ Հայաստան բանկ
Հ/Հ 16072020833100
ՀՎՀՀ 01528093

Հ. Հարությունյան ________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«28 » « հունիսի » 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78-1 գնման պայմանագրի հավելված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	79951110 /263	[1] «Երևանյան ամառ 2018» մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ			3740000	3740000	3740000	3740000	3740000	3740000	3740000	3740000
2	79951110 /264	[2] «Երևանյան ամառ 2018 հուլիս» մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ				1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000
3	79951110 /265	[3] «Երևանյան ամառ 2018 օգոստոս» մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ					3390000	3390000	3390000	3390000	3390000	3390000
		Ընդամենը			3740000	5630000	9020000	9020000	9020000	9020000	9020000	9020000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ու

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀԿՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410593

Գ. Չթրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ազդ» ՍՊԸ
Ք. Երևան, Չարենցի 7/35
ՎՏԲ Հայաստան բանկ
Հ/Հ 16007020833100
ՀՎՀՀ 01528093

Հ. Հարությունյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« »
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78-1 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «28 _» հունիսի 2018 թ.**

«Ազդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի /անձնագիր AK0385216 տրված 23. 11. 2009 001-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-18/78_* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/___/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ազդ» ՍՊԸ

Ք. Երևան, Չարենցի 7/35

ԿՏԲ Հայաստան բանկ

Հ/Հ 16072020833100

ՀԿՀՀ 01528093

Հ. Հարությունյան

(ստորագրություն)

L.S.

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն «Ազդ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՎՏԲ Հայաստան բանկ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16072020833100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01528093

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **902000** /ինը հարյուր երկու հազար/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___"___20___թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___"___20___թ.